

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի ռեկտորատի 2016թ. հունիսի 21-ի
նիստի /արձանագրություն N 20/

1. ԵԹԿՊԻ-ի 2016թ. ընթացիկ ծախսերի և եկամուտների վերաբերյալ գլխավոր հաշվապահի հաշվետվությունն ընդունել ի գիտություն և համարել բավարար,
 - 1.1 հաստատել «ԵԹԿՊԻ ՊՈԱԿ-ի 2016թ. նախապատրաստվող վերանորոգման ենթակա տարածքների մասին թերությունների ակտը» և ընթացիկ վերանորոգման աշխատանքների նախահաշիվը,
 - 1.2 գրենական պիտույքների նոր խմբաքանակ ձեռք բերելու և ամռան ամիսներին վերանորոգման աշխատանքները կազմակերպելու նպատակով թույլատրել գնումների պլանում կատարել փոփոխություն և սահմանված կարգով հայտարարել մրցույթ,
 - 1.3 ԵԹԿՊԻ-ում կայացած « Մշակութային երկխոսություն » խորագրով համերգի հասույթը (117.000 դրամ) հատկացնել Խորեոգրաֆիայի ամբիոնին` թիվ 211 պարասրահի համար անհրաժեշտ տեխնիկական սարքեր ձեռք բերելու նպատակով:
Գնումների գործընթացը կազմակերպել սահմանված կարգով:
2. Հանձնարարել ֆակուլտետների դեկաններին վերահսկել և ապահովել ուսման վարձավճարների հավաքագրումը,
 - 2.1 դեկանատների աշխատակազմի միջոցով ուսման վարձի պարտք ունեցող ուսանողներին տեղեկացնել վերջնաժամկետի մասին:

Գլխավոր տնօրեն

Գ. Հովհաննիսյան